գդալները, շաքարկոտրիչները, չափերը՝ կոշ և դգնակոշ, կշեռքները, բազմաթիվ տնային մանր պարագաները, կարասիները։ Փայտից էին շինվում տան մեջ դրվող ցորենի և ալյուրի ահագին հոիֆագնէրը՝ 90 և ավելի փութ տարողությամբ, թխած հացի սնդուկնէրը, օժիտի հետ կանանց տրված սնդուկնէրը, ամեն տեսակ տուփերը, օրորոցները և այլն, որոնք արհեստավորի, ատաղձագործի ձեռքի գործ էին, մինչդեռ փայտեղեն ամանների և խոհարարական, ինչպես և կալի պարագաների և երկրագործական գործիքների մեծ մասը տան անդամներն իրենք էին շինում։ Մի շարք փայտե իրեր պատրաստվում էին հյուսնի սովորական գործիքներով, իսկ ամանները, խոհարարական իրերն ու մի քանի մանր պարագաները՝ հատուկ գործիքներով։ Աշխատանքը կատարվում է տոնս տալավ՝ փորելով կամ շարխելավ՝ ճախարակելով։ Մեծ հմտություն և ճարպկություն չի պահանջում օրինակ՝ կրտոցավ շերեփ կամ գդալ, նաև չափավոր խորություն ունեցող աման շինելը, կամ նավզգիրավ խնոցի տոնս տալը։ Կրտոցը՝ ծռված բերան ունեցող դանակ է, նավզգիրը մոտ մի մետր երկարություն և 2,5 սմ տրամագծով երկաթե ձող է, որի մի ծայրը 4,5 սմ տրամագծով նավանման լայնացած՝ սրված է, իսկ մյուսը՝ բութ թողած։ Աշխատողը բութ ծայրին թախմախավ՝ մուրճով խփելով, կոճղի ներսը ուզած չափի փորում է։ Այնուհետև մի այլ երկաթե ձողով, որի մի ծայրը լայն դուրանման տափակ սրված է, իսկ մյուսը՝ ծռված, կորացրած, փորվածքի կողերն է հարթեցնում՝ գործիքի կոթից բռնած շարունակ կոճղի մեջ պտտեցնելով։ Լոռում նման գործիքով պատրաստում են նաև փայտե կուժերը, որոնց չենք հանդիպում Զանգեզուրում։

Սակայն, երբ կամենում են ստանալ ավելի նուրբ և ճաշակով ձևավորված և ավելի խոր ամաններ, դիմում են ոչ թե փորելու տեխնիկային, այլ շարխի՝ ճախարակի օգնության։ Շինվող իրը պտտեցվում է ոչ թե հորիզոնական դիրքով, ինչպես լինում է բրուտի դուրգի վրա ուղղահայաց հաստատված առանցքի միջոցով, այլ ուղղահայաց դիրքով՝ հորիզոնական հաստատված առանցքի շնորհիվ։ Այդ արհեստով առավելապես հաճախ են զբաղվում Աճանան գետի ափերի Խոտանան գյուղի և Կապանի անտառաշատ գյուղերում, անտառաշատ շրջանում։ Քիշունիի (Զայզամիի) Շուռնուխի անտառին մերձակա գյուղերում թե՛ հայ և թե՛ ադրբեջանական բնակիչների մեջ տարածված է կամի և կալի այլ գործիքների պատրաստման արհեստը։

Զանգեզուրի շարխը ոչնչով չի տարբերվում Անդրկովկասի և այլ վայրերում գործածվողից, որը շարժման է բերվում ոտով։ Սակայն, Կապանի Վաշագան գյուղի բնակիչ թաֆնա ֆաշող ճախարակագործ Աղաբեկ Վեզիրյանը[132] մի սրամիտ հարմարեցումով շարխը պտտեցնում էր ջրի անկման ուժով։ Նա իր գուլաֆը սարքել էր ձորի մեջ։ Դա երկու անտաշ ծառաբուն բարակ սյուներով ենեցուկված մի ծածկ էր, տանիքը հյուսված ճյուղերով, տերևներով և վրան փռված հողով։ Այդ ծածկի տակ ստվերում նստած, նա մեջքը դեպի ձորի կողը դարձրած, աշխատում էր իր շարխի վրա, որի առանցքի ծայրին ամրացված էր ուղղահայաց նստեցրած թևավոր անիվը։ Հատուկ բերված առվի ջուրը մի նավով թափվում էր այդ անիվի թևերի վրա և պտտեցնում թե՛ անիվը և թե՛ նրա հետ կապված առանցքը։ Առանցքով սեղմված փայտի կտորը՝ կուպէտը, որից վարպետը զանազան ձևի կրտոցնէրավ շարխում էր թաֆնանէր, կշեռքի թաթեր, կոշէր և դիգնակոշէր, տէֆորիանէր, նույնիսկ խմոր գնդելու և բաց անելու հատ ու լայն սէղանանէր։

[132] 1931 թ. մեր գիտարշավից հետո վախճանված։